

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԳԻՐԸ. ԳԱՔՐԻԵԼ
ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

«Բազմավեպի» առաջին խմբագիրը Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկին էր (1843-1848): Մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, եկեղեցական գործիչ Գաբրիել Կոստանդինի Այվազովսկին ծնվել է 1812 թ. մայիսի 10-ին, Թեոդոսիայում: Նախնական կրթությունն ստացել է տեղի գավառական դպրոցում:

1826-ին ուղարկվում է ս. Ղազար (Վենետիկ), որտեղ ավարտելով ուսումը, դառնում է Մխիթարյան միաբանության անդամ (1830), ձեռնադրվում վարդապետ (1834): Այնուհետև ստանձնում է փիլիսոփայության և աստվածաբանության ուսուցչի պաշտոն՝ միաժամանակ վարելով միաբանության ընդհանուր քարտուղարի գործերը: 1842-1848-ին դասավանդել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում: 1843-ին հիմնում և խմբագրում է «Բազմավեպը» (մինչև 1848-ը): 1848-1856-ին եղել է Փարիզի Մուրադյան վարժարանի տնօրեն և հայոց լեզվի և պատմության ուսուցիչ: Գծովելով Մխիթարյանների հետ՝ 1856-ին վերադառնում է հայ առաքելական եկեղեցու գիրկը և մնում Փարիզում, որտեղ Ս. Թեոդորյանի և Ա. Գալֆայանի հետ հիմնում ու ղեկավարում է Հայկազյան վարժարանը: 1855-58-ին խմբագրում և հրատարակում է «Մասյաց աղավմի» ամսագիրը: 1858-ին վերադառնում է Ռուսաստան և նշանակվում Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմակալ: Թեոդոսիայում հիմնում է Խալիթյան վարժարանը (որի տեսուչն էր 1858-65-ին), շարունակում է հրատարակել «Մասյաց աղավմին» (մինչև 1865-ը): 1867-ին էջմիածնում ձեռնադրվում է եպիսկոպոս, 1871-ին՝ արքեպիսկոպոս: Գևորգ Գ կաթողիկոսի հրավերով կարգվում է Գևորգյան ճեմարանի տեսուչ (1875-76) և Թիֆլիսի թեմական առաջնորդ: Վախճանվել է 1880-ի ապրիլի 8-ին, Թիֆլիսում:

Հայտնի աշխատություններն են՝ «Համառոտ պատմութիւն ռուսաց» (1836), «Պատմութիւն օսմանեան պետութեան» (հ.1-2, 1841), «Նիկոլ եպիսկոպոս և պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթողիկոսիւն» (1877), «Պատմութիւն խալիպեան ուսումնարանին ազգիս հայոց» (1880), «Խանգարմունք հայկաբանութեան ի հնումն և ի նորումս» (1869), «Ուղղագրութիւն լեզուիս հայոց» (1869), «Նախակրթանք հայերէն լեզուի» (մաս1-3, 1860-77), «Ընթերցարան լեզուին ռուսաց» (1862) և այլ գործեր: Ունի մի շարք կրոնա-աստվածաբանական երկեր: Տիրապետելով եվրոպական ու արևելյան 12

լեզուների, Այվազովսկին նշանակալի ժառանգություն է թողել: Նա իտալերենից թարգմանել է Սիլվիո Բելլիքոյի «Բանտը իմ» վիպակը (1853), ֆրանսերենից Դովսեյի Տրոգի «Խորհրդածութիւնք» տրակտատը (1854), Ի. Կոխլովի առակները (աշխարհաբար), հայերենից իտալերենի է թարգմանել Մ. Խորենացու և Ազաթանգեղոսի Պատմությունները (1841, 1843): Ազգասիրության և միաբանության կոչելով ազգին, Այվազովսկին դատապարտում էր քաղաքացիական պատերազմները, ապստամբությունը, անհնազանդությունը, հեղափոխությունը և նրանց, ովքեր ընդդիմանում էին «օրինաբանյալ տերությանը» և երկպառակության հրահրում ազգը: Այս հոդի վրա էլ Այվազովսկին գաղափարական սուր հակամարտության մեջ էր Մ. Նալբանդյանի, Ս. Ոսկանի և ուրիշների հետ:

Մ. Նալբանդյանի ժամանակներից սկսած հայ պատմագրության և գրականագիտության մեջ տիրապետող մի կարծրատիպ կա, որով սովորաբար հակադրվում են միաբանության հիմնադիրն ու Մխիթարյանները: Մ. Նալբանդյանը մի անավարտ ուսումնասիրություն ունի, որ խորագրված է «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք», որտեղ բարձր գնահատելով Մխիթար Սեբաստացուն, նրա նպատակներն ու իր առաջ դրած խնդիրները, սուր քննադատության է ենթարկում միաբանության անդամների գործունեությունը¹: Անշուշտ, հասկանալի է Մ. Նալբանդյանի ազատական դիրքորոշումը, որով նա անհաշտ պայքար էր մղում կղերականության դեմ: Սակայն ժամանակն է վերաթեքավորել այդ հայեցողությունը և հայ հասարակական կյանքում իրենց կատարած դերակատարությամբ վերստին գնահատության ենթարկել Նալբանդյանի աշխարհատեսության հակոտնյային՝ ազգային պահպանողականությանը՝ ի դեմս նաև Մխիթարյանների: Զետաքրքիրն այստեղ այն է, որ Մխիթար Սեբաստացուն Մխիթարյաններին հակադրող գնահատություններում Մ. Նալբանդյանի և Գ. Այվազովսկու դիրքորոշումները գրեթե նույնական են: Մի քանի զուգահեռ մեջբերումներով փորձենք հիմնավորել ասվածը: Այսպես, արժանին մատուցելով Մխիթար Սեբաստացուն՝ «Մխիթարը ամենայն բան զոհեց հայոց ազգի լուսավորության համար, զոհեց մինչև անգամ յուր ազգային կրոնը, բայց դիտավորությամբ ենթարկվեցավ նա պապական լուծի տակ: Նորա ամեն մի քաջալերական խոսքերից, որ տալիս է յուր աշակերտներին, պարզ երևում է, որ ուներ նա յուր սրտի խորքում մի գաղտնի խորհուրդ՝ երբեմն թափել յուր անձը և միաբանությունը պապական իշխանության տակից և ուրանալ նորա իրավասությունը»², սուր քննադատության է ենթարկում նրա հաջորդներին, որովհետև, ինչ միաբանության համար ընդամենը դիմակ էր, նրանց համար դարձավ չուր: «Մխիթարը պապականությունը դրեց յուր երեսին՝ որպես դիմակ, նորա ապագայքը ծնանում են արդեն դիմակով, բայց հայկական դիմակով: Մխիթարի

¹ Տես Զյուսիսապիայ, 1858, թիվ 5-6, և 11:

² Նալբանդյան Մ. ԵԼԺ, հ.2, էջ 274:

արտաքինը-պապականությունը, դառնում է նոցա համար ներքին, Մխիթարի ներքինը... հայություն, դառնում է արտաքին, մի լոկ դիմակ, որով երևում են միմիայն հայոց ազգի առաջն»³։ Նույն խնդրի առնչությամբ ահա թե ի՞նչ է գրում Գ. Այվազովսկին. «Մխիթար աբբահայրն իր միաբանությանը համար պարզ և համառոտ կանոնադրություն մը շարադրած էր, և անով կառավարվեցան Մխիթարյանք բոլոր իր աբբայության ժամանակը»⁴։ Այդ կանոնները հաստատվել էին Զոռմի պապի կողմից դեռևս 1712 թվականին, սակայն որպես «առժամանակյա սահմանադրություն»՝ կարոտ կատարելագործման և լրացման։ Այդ կանոնադրությունը իր պարզությամբ ավելի հարմար էր արևելյան և հայկական «ողջամիտ» հոգուն, քան թե եվրոպական և առաջին հերթին հռոմեական «բազմակնճիո քաղաքականության» (72)։ Ուստի Մխիթար Սեբաստացու հաջորդը՝ Ստեփանոս Մելքոնյանը ստիպված եղավ սրբազրելու աբբահոր սահմանադրությունը, լրացնելու և փոփոխելու, այնպես որ, «անով կաթոլիկության ոգուն ավելի հարմար ընթացքի մը մեջ մտնե Մխիթարյան միաբանությունը» (73)։ Պապի գլխավորությամբ չորս կարդինալներ ավելի դյուրին և ավելի ձեռնտու համարեցին ճիզվիտների սահմանադրությունը և այն պարտադրեցին Մխիթարյաններին, որով նրանք պարտավորվեցին «անոնց ճիշդ պահպանությանը» և իրենք էլ որպես կաթոլիկ և պապական «ստիպվեցան ընդունելու ի վնաս անձանց և ազգին» (74)։

Մ. Նալբանդյանի քննադատության առանցքը Մխիթարյանների՝ հենց այս ճիզվիտական սահմանադրություն որդեգրելու հանգամանքն է։ Նույնն է պարագան նաև Այվազովսկու գնահատությամբ։ Ավելին, նա այդ հարցում ավելի անողոք է, քան ազատական Նալբանդյանը։ «Թե որ երկու հարյուր տարիէ մը ի վեր եվրոպայի մեջ ճիզվիթ ըսելը համագոր է կեղծավոր, բանսարկու, ստախոս և փարիսեցի ըսելուն, հայտնի բան է որ այն ճիզվիթության հինը իրենց սահմանադրությունն է. և որչափ որ մեկը այն սահմանադրությունը ճիշդ պահե՝ այնչափ ավելի ճիզվիթ է... Մխիթարյանց սահմանադրությունն ալ ճիզվիթներուն սահմանադրության գրեթե բառական թարգմանությունն է» (74-75)։ Իսկ սա, ըստ Այվազովսկու, նշանակում է, որ հանձին Մխիթարյանների մենք գործ ունենք հայ ճիզվիտների հետ։ «Եվ մենք այնպիսի անձինք տեսեր ենք դժբախտությամբ վաճքին մեջ որ ոչ միայն վարութ ճիզվիթ էին, այլև ճիզվիթ ըսվելը իրենց մեծ պարծանք կհամարեին» (75), - ցավով նշում է շուրջ 30 տարի միաբանության անդամ եղած արքեպիսկոպոսը։ Այնուամենայնիվ, Գ. Այվազովսկու համար պարզ է նաև, որ Միաբանության անդամների մեջ այդուհան-

³ Ն. տ., էջ 276։

⁴ Այվազովսկի արք. Գ., Ուրուագիծ ոգու և ընթացից Մխիթարյան միաբանության, Փարիզ, 1857, էջ 72։ Այստեղ հարկ ենք համարում նշել, որ այս աշխատությունը նա գրել է եղբոր՝ աշխարհափռչակ նկարիչ Զովհաննես Այվազովսկու խնդրանքով (այսուհետ՝ կնշվեն միայն էջերը)։

դերձ կան անձինք, որոնց համար «...այն սահմանադրությունը ոչ երբեք ընդունելի եղած է ամենայն Մխիթարյանց առ հասարակ. ուստի և միշտ փափաքելի եղեր է իրենց որ փոխվի ու սրբագրվի, և միաբանությանն ու ազգիս այժմու պիտոյիցը հարմարցվի» (75-76),- գրում է նա: Ճիշտ է և այն, որ ճիզվիտական սահմանադրության դեմ շատ անգամներ ընդվզումներ են եղել, որոնցից մեկի մասին պատմում է ինքը՝ Այվազովսկին: «Երբոր 1846-ին ընդհանուր ժողով ըրավ Միաբանությունը նոր մեծավոր ընտրելու համար, ու այս խնդիրը մեջ բերվեցավ զորավոր փաստերով՝ պահանջելով որ մեծավորին ընտրութենեն առաջ սահմանադրությունը սրբագրվի, քանի մը հոգու հնարքովը որոշվեցավ որ այն խորհուրդը նոր մեծավորին ընտրութենեն ետքը ձգվի» (76): Սակայն տասը տարի անց խնդիրը դեռևս մնում է չլուծված և արդեն Միաբանության հետ գծոված և հեռացած Այվազովսկուն մնում է ընդամենը խորհուրդ տալ նրանց. «Իսկ եթե հանկարծ բարեմիտ Մխիթարյանց ոմանց ակնկալությունը կատարվելով երբևիցե ընդհանուր ժողովը գումարվի, խորհուրդ կուտանք իրենց կարեկցաբար որ այն առթով ոչ միայն հռովմեական դիմակը մեկդի ձգեն, այլև այն ճիզվիթական սահմանադրությունը, այն կեղծավորության խմորը» (77-78): Իսկ այդ «կեղծավորության խմորը» ըստ Այվազովսկու գալիս է «անուղիղ» դաստիարակությունից: «Պեռահասակ աշակերտաց տրված կրթությունը մեկեն հայտնի կընե թե Միաբանության հոգին ի՞նչ է, և հոն մտնել ուզողին ի՞նչ տեսակ գաղափարներ և ի՞նչ վարմունք կպահանջվի» (80),- գրում է նա: Վաճճի նորընծայարան մտնող տասը-տասնչորս տարեկան պատանիներին այստեղ սպասում են խստակյաց կյանք ու դաժնություններ, երբ «վարդապետ ըլլալու փափաքը սրտին մեջ կթաղեն», իսկ հայրենիք վերադառնալու հույսը կամաց-կամաց կմարի և «տղուն վրա կարգե դուրս հանդարտություն կամ թե ըսեմ թմրածություն ու վախկոտություն մը կուզա... Եվ այն կըլլա փարիսական խմորին տղուն սրտին մեջ բռնած ըլլալուն առաջին նշան, և հետզհետե առաջ կերթա խմորումը մինչև որ բոլոր զանգվածը կեղծավորության խմորովը թթվի՝ նաև հետագա ճամբաներով» (84-85),- նկատում է Այվազովսկին: Այս բոլորից գատ, ըստ վերոհիշյալ սահմանադրության, ուսանողները, այնուհետև նորընծա քահանաները շուրջ տասը-տասներկու տարի «իրենց վերակացուեն ու դասատուեն ի գատ ուրիշ մարդու հետ պիտի չխոսին նույնիսկ վաճճին մեջ», այդ պատճառով շատերը հաճախ «թմրած, խրտան ու մարդատյաց բնություն մը կստանան» (95-96): (Կաթոլիկ խստակյանց կրթության մասին հրաշալի է գրել Ջեյմս Ջոյսը «Պատանի արտիստի դիմանկարը» վեպում): Այս ամենի հետևանքը լինում է կույր հնազանդությունը: Կամավոր հնազանդությունը քրիստոնեական պարտք է և գեղեցիկ առաքինություն, առանց որոնց ոչ մարդկային ընկերություն կլինի, ոչ միաբանություն և ոչ էլ կարգ ու կանոն կպահպանվի, սակայն կույր հնազանդությունը, որով դաստիարակվում են Մխիթարյան միա-

բանության ուսանողները, նրանց դարձնում է «անբան անասուններ», որպեսզի «ճիզվի՞ր մեծավորը ...իր բարի ու չար հաճոյիցն ու խելքին փչածին ծառայեցնե զանոնք առանց դժվարության» (104),- գրում է Այվազովսկին: Մի բան, որ հակառակ է աստվածային և մարդկային օրենքներին, հավասարապես անընդունելի՝ մարդկության և քրիստոնեության համար:

Արքեպիսկոպոսը պարսավելի է համարում նաև Միաբանության «հասարակասիրության» կարգը, երբ այն հակառակ է քրիստոնեական եղբայրասիրությանը, մանավանդ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերվում է միաբանության անդամների օգնության կարոտ, ծեր, հիվանդ և չքավոր ծնողներին սատարելու խնդրին: «Ի՞նչ ըսելու է այն կրոնավորին որ ես իմ հասարակասիրությանս պիտի ծառայեմ ըսելով՝ մինչև քսան-երեսուն տարի իր տեսության կարոտովը ծերունի ծնողացը սիրտը հալեցնե մաշեցնե ու թերևս այն կարոտուն սաստկութենե անոնց կենացը կարճնալուն ալ պատճառ ըլլա: Ի՞նչ ըսելու այն կրոնավորին որ երկու ստակ ծեռքս որ անցնի՝ վանքս պիտի ուղարկեմ ըսե, ու իր ծնողը, որ իրեն կյանք տվեր ու վրան այնչափ խնամք ցուցվեր են, օրվան ապրուստին կարոտ թողու իրենց ծերության ատենը» (111) -ցավով նշում է Այվազովսկին: Եվ ամենակարևորը՝ կրոնավորը պիտի սիրի իր միաբանությունը Աստծո, իր հոգու փրկության համար և ոչ թե Աստծու փառքը, ազգի օգուտը և իր խղճմտանքը զոհաբերի միաբանությանը: Այդ դեպքում՝ «Ի՞նչ ըսենք...այն տգետ կրոնավորին կամ չարամիտ կեղծավորին որ չըլլա թե հասարակությանս վնաս մը պատահի ըսելով՝ իր խղճմտանքը ծալլե, սիրո պատվիրանները ոտքի տակ առնե, իր ազգը նախատե, բամբասե, մատնե, թշնամանե, որով և հոգվույն փրկությունն անգամ վտանգի մեջ դնե» (114),- գայրանում է Այվազովսկին:

Միաբանության նախկին անդամը և «Բազմավեպի» առաջին խմբագրի համար անընդունելի է նաև Միաբանության ճիզվիտական սահմանադրության «մեծավորին իշխանության մշտենջականության» կանոնը: Խնդիրն, իհարկե, այն չէ, որ ցմահ պաշտոնավորությունն ինքնին վատ է, այլ այն, որ այդ հանգամանքը անսահման իշխանություն է տալիս նրան և չարաշահման անսպառ հնարավորություն: «Եթե իրավցնե ամեն մեծավոր իր անվանը և պաշտոնին համեմատ Զայր ըլլար միաբանից, և հայրաբար խնամեր անոնց հոգևոր և մարմնավոր պիտույքը, այդ կանոնը վնասակար ըլլալու տեղ օգուտներ անգամ կրնար ունենալ: Բայց երբոր մեծավոր մը տիրապետական ու փառասիրական հոգով լցված, իր ձեռքին տակի միաբանները գերիի պես կկառավարե, երբոր ճիզվիթական սահմանադրության սանձովը իր կրոնավորները, իբրև գծիս և զգորիս ծառայեցնելու կաշխատի... վանքը և վանականները խռովությամբ ու տժգոհությամբ կլեցեցնե... միաբաններուն ճարը հատած, մեծավորին օր մը առաջ մեռնելուն կփափաքին որ աչատին ձեռքեն» (129-139),-կարծում է նա:

Այս ամենի պատճառը Այվազովսկին տեսնում է կաթոլիկ-ճիզվիտական սահմանադրության մեջ: Այն Միաբանությանը խորթացրել է ազգային ավանդներից և՛ «որչափ որ հեռացեր են ազգային հայկական պարզ և ուղիղ սկզբունքներեն, այնչափ ընթացքնին ծներ է ու հետզհետե կժռի, և կրոնավորության սկզբնական հոգիեն անգամ կխտտորի որ սուրբ Ավետարանին վրա հիմնված է» (132-133),- եզրակացնում է նա:

Ահա այս թվարկված և չթվարկված պատճառներով Այվազովսկին գծովում է Միաբանությունից և հեռանում: Առերևույթ թվում է, թե Միաբանությանը քննադատելու պատճառը հեղինակի անձնական վիրավորվածությունն ու հավակնոտությունն են եղել, սակայն բերված փաստերը (տես նշված աշխատության «Վերջաբանը») փարատում են ամեն մի կասկած: «Երբոր շատ տարիներով, շատ փորձերով, շատ դիպվածներու մեջ հայտնապես տեսանք, որ ...կասկածնիս իրավ են եղեր...երբ տեսանք որ հռովմեական ու ճիզվիթական ճամբաներու մեջ մտնելով որչափ հեռացեր է միաբանությունը սուրբ Ավետարանին սկզբունքներեն (տես գրքի «Քանի մը սկզբունք Մխիթարյան միաբանության» գլուխը, էջ 132-145, -Լ. Խ.), և նախնի հարց մերոց երանելեաց լուսավոր, պարզ և անխարդախ ճանապարհեն,-փոխեցինք կարծիքնիս, և գատվեցանք ելանք միաբանութենն» (154-155), - իր հեռանալը պատճառաբանում է նա:

Ինչպես տեսնում ենք, Մխիթարյան միաբանության Այվազովսկու քննադատությունը հիմնական գծերով համընկնում է Մ. Նալբանդյանի սկզբունքների հետ (ճիզվիտական սահմանադրությունից բխող բոլոր պարսավելի կողմերով՝ պապականություն, միահեծան իշխանություն, կույր հնազանդություն, ազատության կաշկանդում, ազգային առաքելական եկեղեցու հիմունքների ուրացում և այլն): Եվ այդ իմաստով իրոք իրավացի է Մ. Նալբանդյանը, երբ գրում է. որ այնտեղ, «ուր պատմությունը հնազանդվում է պապականության քաղաքական տեսութեններին, ուր փիլիսոփայությունը, ազատ և վերհամբարձ մտածությունը ստրկանում են պապի հանդգնամիտ անմեղանչականությանը»⁵, -ապա «ընդհանուր լուսավորություն տարածել մեր ազգի մեջ, նորա գործը չէր և նա բոլորովին ապարդյուն գտնվեցավ...» (271): Զմոռանանք նաև նշել, որ Այվազովսկու «Ուրվագիծը» գրվել է Մ. Նալբանդյանի «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» ուսումնասիրությունից ավելի վաղ, 1857-ին: Նաև ընդգծենք, որ Նալբանդյանի՝ Մխիթարյանների դրական գնահատությունը, այն է թե՛ «Մխիթարյան միաբանությունը, այդ մեզանից ընկած հատվածը, օտարության մեջ, պատերազմելով բազմադիմի նեղութենների հետ, քունը կտրել է հայոց հին լեզուն մշակելու և ծաղկեցնելու համար, և եվրոպական մարդը այսօր ծանաչում է հայոց ազգը Մխիթարյանց շնորհքով» (276), վերաբերում է նաև Գ. Այվազովսկուն: Այդ նա էր, որ առաջին անգամ իտալերեն թարգմանեց Ազաթանգեղոսի և

⁵ Նալբանդյան Մ. ԵԼԺ, հ.2, էջ 272:

խորենացու Պատմությունները, որոնցով եվրոպական միտքը ճանաչեց և գնահատեց հայոց հիմնատեմադիտությունը, գրեց պատմագիտական մի շարք աշխատություններ, հայոց և ռուսաց լեզուների դասագրքեր և, ի վերջո, հմուտ խմբագրի քաջիմացությամբ հիմնադրեց, կուռ կառուցվածք տվեց մի հայագիտական հանդեսի, որ գրեթե երկու դար մշակել և շարունակում է մշակել հայոց լեզվի և հայոց մատեմադիտության անդաստանը⁶:

Մ. Նալբանդյան-Մխիթարյաններ ընդդիմության առիթով քննենք ևս մի դրույթ: Ողջ 19-20-րդ դարերում հայ քննադատական միտքը գրեթե անառարկելի է համարել հայ կղերականության «սոցիտության» իրողությունը: Այսպես, «... Մինչև այսօրս չէ երևցած դոցա մեջ մի ուսումնական անձն, եվրոպական բազմակողմանի և տիեզերական կրթությամբ. դոցա գիտությունը այս և այն ուսման ճյուղի մեջ են էնցիկլոպեդիկական հատ ու կոտոր տեղեկություն. իսկ կապակից ուսումն ամենևին եվրոպական կարգով, եվրոպական հայացքով չէր կարող. այո՛, ոտքի տեղ գտանել մի այնպիսի դպրոցում, կամ մի այնպիսի ընկերության մեջ...» (272), «առարկություն չընդունող տոնով, վստահաբար պնդում է Մ. Նալբանդյանը: Կարծում ենք, այս հարցում մա բնավ իրավացի չէ, որովհետև, սկսած 17-18-րդ դարերից, եվրոպական հումանիտար և գիտական միտքը կրթությունը այլ կերպ չէր պատկերացնում, քան մարդու բազմակողմանի զարգացումը, «ազատ արվեստների» և դասական լեզուների իմացությունը»⁷: Իսկ բազմակողմանի զարգացած, մանավանդ դասական լեզուների իմացության հարցում, ցայսօր հայ իրականության մեջ Մխիթարյան միաբաններից ոմանք մրցակից չունեն, և որպես «ուսումնական անձն» Ղևոնդ Ալիշանը այն եզակիներից է, որ հայագիտական միտքը պահում էր ժամանակի եվրոպական հումանիտար գիտության բարձրության վրա: Այլ բան է, որ նրանք չունեին կամ բնավ չէին ցանկանում ունենալ «եվրոպական կարգով, եվրոպական հայացք» հատկապես այն խնդիրների վերաբերյալ, որոնք վերաբերում էին քաղաքականությանը և աշխարհիկ այլ արժեքներին:

Գալով Այվազովսկուն, վերստին նշենք, որ մա տիրապետում էր մեկ տասնյակից ավելի եվրոպական հին ու նոր լեզուների և իր ողջ իմացությունը նվիրաբերեց հայ ազգի լուսավորությանը՝ մերթ զրական թարգմանություններ կատարելով եվրոպական լեզուներից, մերթ հայ մտքի կոթողները թարգմանաբար ներկայացնելով օտարներին: Եվ ամենակարևորը՝ հիմնադրեց «Բազմավեպը», մի հանդես, որ զոյատևում է մինչև այժմ և իր գիտական ներդրումներն է անում հայագիտության մեջ:

⁶ *Անշուշտ, ուսումնասիրության առանձին նյութ է Մ. Նալբանդյան-Այվազովսկի դիմակայության խնդիրը, այստեղ միայն նշենք, որ «Կտոր մը Այվազովսկի քաղաքականություն» հոդվածի քննադատական ոգին՝ կապված Այվազովսկու հետ, մեր ենթադրությամբ շատ ավելի կենցաղային հիմք ունի, քան սովորաբար ընդունված է կարծել:

⁷ Моль А., Социодинамика культуры. М., Прогресс, 1973, с. 37: